Հավելված
ՀՀ կառավարության 2008 թվականի
դեկտեմբերի 25-ի N 1550 - Ն որոշման

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՒՄ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԱՄԱԶԳԵՍՏԻ ՏԱՐԲԵՐԱՆՇԱՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՔ ԿՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտում աշխատողների համազգեստի տարբերանշանները և դրանք կրելու կարգը։

II. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՒՄ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԱՄԱԶԳԵՍՏԻ ՏԱՐԲԵՐԱՆՇԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

2. Ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտում աշխատողների համազգեստի տարբերանշաններն ամրացվում են թևքի (կոստյումի և վերնահագուստի), կրծքի (վերնաշապիկի), օձիքի, գլխարկի, գլխարկաբոլորքի և գլխարկահովհարի վրա՝ համաձայն NN 1 և 2 ձևերի։

3. Ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտում աշխատողների համազգեստի տարբերանշանները, ըստ պաշտոնական դիրքի, բառերի և գրաֆիկ նշանների համակցություններ են, որոնք ընդգրկում են ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտի սեփականատիրոջ կամ կառավարչի անվանումը և անվանման հապավումը (հայերենով և մեկ օտար լեզվով), հատուկ քաղաքացիական հյուսվածքով տրեզ՝ եզրակարված եզրակով, արծաթագույն աստղով հատուկ նկար՝ կենտրոնում կարմիր գույնի աստղով, երկու ճյուղերի տեսքով հատուկ նկար և արծաթագույն

վարդակապի տեսքով կոկարդ՝ տեղակայված արծաթագույն տեխնիկական նշանի նկարի (խաչաձև տեխնիկական բանալի և մուրճ) կարմիր դաշտի մեջտեղում։

4. Ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտում աշխատողների համազգեստի տարբերանշանների թևքի նշանները, ըստ պաշտոնական դիրքի, կարվում են երկու թևքերի վրա՝ կարից կար 8-10 սմ հեռավորության վրա՝ թևքի ներքևի եզրից մինչև տրեզի ներքևի եզրը և իրենցից ներկայացնում են հետևյալ համակցությունները՝

1) բարձրագույն խմբի պաշտոններ՝ համաձայն N 3 ձևի՝

ա. հատուկ քաղաքացիական հյուսվածքով արծաթագույն տրեզ (լայնությունը՝ 30 մմ)՝ տրեզի երկու կողմից եզրակարված կարմիր եզրակով (լայնությունը՝ 2,5 – 3 մմ),

բ. հատուկ նկարով արծաթագույն 1-4 աստղ՝ կարմիր գույնի ներքին աստղով (ներքին տրամագիծը՝ 25 մմ),

գ. տրեզի վերևի եզրի և աստղի ներքևի եզրի միջև հեռավորությունը 10 մմ է։ Աստղերի կենտրոնների միջև հեռավորությունը՝ հորիզոնագծով, 35 մմ է.

2) ավագ խմբի պաշտոններ՝ համաձայն N 4 ձևի՝

ա. արծաթագույն տրեզ (լայնությունը՝ 30 մմ)՝ եզրակարված կարմիր եզրակով (լայնությունը՝ 2.5 – 3 մմ) վերևի և ներքևի եզրերում և տրեզի մեջտեղի մասում,

բ. հատուկ նկարով արծաթագույն 1-4 աստղ՝ կարմիր գույնի ներքին աստղով (ներքին տրամագիծը՝ 25 մմ),

գ. տրեզի վերևի եզրի և աստղի ներքևի եզրի միջև հեռավորությունը 10 մմ է։ Աստղերի կենտրոնների միջև հեռավորությունը՝ հորիզոնագծով, 35 մմ է.

3) միջին խմբի պաշտոններ՝ համաձայն N 5 ձևի՝

ա. արծաթագույն տրեզ (լայնությունը՝ 15 մմ), տրեզի երկու կողմից եզրակարված կարմիր եզրակով (լայնությունը՝ 2,5 – 3 մմ),

բ. հատուկ նկարով արծաթագույն 1-4 աստղ՝ կարմիր գույնի ներքին աստղով (ներքին տրամագիծը՝ 25 մմ),

գ. տրեզի վերևի եզրի և աստղի ներքևի եզրի միջև հեռավորությունը 10 մմ է: Աստղերի կենտրոնների միջև հեռավորությունը՝ հորիզոնագծով, 35 մմ է.

4) կրտսեր խմբի պաշտոններ՝ համաձայն N 6 ձևի՝

ա. արծաթագույն տրեզ (լայնությունը՝ 15 մմ)՝ տրեզի երկու կողմից եզրակարված կարմիր եզրակով (լայնությունը՝ 2,5 – 3 մմ).

5) շարքային կոչումով աշխատողների համար համազգեստի տարբերանշանների թևքի նշանները՝ համաձայն NN 7, 7.1, 7.2, 8, 9 և 10 ձևերի, ըստ պաշտոնական դիրքի, նախատեսված չեն:

5. Ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտում աշխատողների համազգեստի տարբերանշանների կրծքանշանները, ըստ պաշտոնական դիրքի, կարվում են կրծքի ձախ կողմում՝ գրպանի վերևի մասում և գրաֆիկական խորհրդանիշների համակցություններ են, թևքի նշանների նման, բայց ավելի փոքր չափերով, որոնք կարվում են հագուստի գույնի կտորից՝ գրպանի կափույրի վրա (լայնությունը՝ 65-70 մմ)՝ համաձայն N 11 ձևի:

6. Աշխատողների համազգեստի թևքի տարբերանշանները, որոնք ցույց են տալիս ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտի պատկանելությունը, կարվում են ավագ, միջին, կրտսեր և շարքային խմբերի կոստյումների և վերնազգեստի ձախ թևքին՝

1) աշխատողների համազգեստի թևքի տարբերանշանն իրենից ներկայացնում է օվալաձև կոնտուրային կարմիր գույնի վահան է (լայնությունը՝ 75 մմ, բարձրությունը՝ 50 մմ), որը ներառում է ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտի սեփականա-տիրոջ կամ կառավարչի անվանումը և անվանման հապավումը՝ համաձայն N 12 ձևի.

2) թևքի տարբերանշանը կարվում է թևքի վերին եզրից 8-10 սմ հեռավորությամբ.

3) ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտ ներկայացնող ընկերության անվանման հապավումը գտնվում է կարմիր եզրով եզրագծված արծաթագույն վահանի կենտրոնում:

7. Ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտում աշխատողների բաճկոնների օձիքների վրա նախատեսվում է ամրացնել տարբերանշաններ (ըստ պաշտոնական դիրքի), որոնք ներկայացնում են գրաֆիկական տարբերանշանների հետևյալ տարբերակները՝

1) բարձրագույն խմբի պաշտոններ՝ համաձայն N 13 ձևի՝

ա. արծաթագույն ճյուղերի տեսքով հատուկ նկար, որը բաղկացած է երեք տերևներից.

2) ավագ, միջին, կրտսեր խմբերի պաշտոնների համար բաճկոնների օձիքների վրա տարբերանշաններ նախատեսված չեն։

8. Ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտում աշխատողների գլխարկաբոլորքի վրա նախատեսվում է ամրացնել տարբերանշաններ (ըստ պաշտոնական դիրքի), որոնք ներկայացնում են գրաֆիկ նշանների հետևյալ համակցությունները՝

1) բարձրագույն խմբի պաշտոններ՝ համաձայն N 14 ձևի՝

ա. արծաթագույն կարով հատուկ նկար, որը բաղկացած է երկու ճյուղից՝ յուրաքանչյուրը՝ երեք տերևով,

բ. կոկարդ (արտաքին տրամագիծը՝ 45 մմ) արծաթագույն վարդակապի տեսքով, նշանի կարմիր դաշտի մեջտեղում ներկայացված է արծաթագույն տեխնիկական նշանը (խաչաձև տեխնիկական բանալի և մուրճ).

2) ավագ, միջին, կրտսեր խմբի պաշտոններ՝ համաձայն N 15 ձևի՝

ա. կոկարդ (արտաքին տրամագիծը՝ 45 մմ) արծաթագույն վարդակապի տեսքով, նշանի կարմիր դաշտի մեջտեղում ներկայացված է արծաթագույն տեխնիկական նշանը (խաչաձև տեխնիկական բանալի և մուրճ)։

9. Ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտում աշխատողների գլխարկահովհարների վրա նախատեսված է ամրացնել տարբերանշաններ (ըստ պաշտոնական դիրքի), որոնք ներկայացնում են հետևյալ համակցությունները.

1) բարձրագույն խմբի պաշտոններ՝ համաձայն NN 1 և 16 ձևերի՝

ա. արծաթագույն կարով հատուկ նկար, որը բաղկացած է երկու ճյուղից՝ յուրաքանչյուրը՝ երեք տերևով,

բ. արծաթագույն կոճակափեշ (լայնությունը՝ 2,5-3 մմ),

գ. կոճակափեշը գտնվում է հովհարի եզրից 3-5 մմ հեռավորության վրա։ Կարված ճյուղերը ներկայացված են մեկը մյուսի դիմաց.

2) ավագ խմբի պաշտոններ՝ համաձայն N 2 ձևի՝

ա. արծաթագույն կոճակափեշ (լայնությունը՝ 2,5-3 մմ),

բ. կոճակափեշը գտնվում է հովհարի եզրից 3-5 մմ հեռավորության վրա.

3) միջին, կրտսեր խմբի պաշտոնների համար գլխարկահովհարների վրա տարբերանշաններ՝ համաձայն N 17 ձևի, նախատեսված չեն։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ